
II

ԲԱՌԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ ՀՈՄԱՆԻՇՆԵՐԻ ՁԵՌԱԳԻՐ ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ

ՆԱԶԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

XII–XVII դդ. հումանիշների ձեռագիր բառարաններում՝ առկա են իմաստային նույնություն և հնչյունական որոշ զանազանություն դրսևորող բառեր, որոնք լեզվաբանական աշխատություններում դիտվում են իբրև բառային տարբերակներ, զուգաբանություններ: Այդպիսիք V դ. մատենագրության մեջ արձանագրել և քննել է Լ. Հովհաննիսյանը¹, իսկ հայերենի հնագույն շրջանի համար՝ Գ. Ջահուկյանը բարբառային տարբերակներ ձևակերպումով: Հին ձեռագրերում դրանք սովորական երևույթ համարելով՝ Հ. Մուրադյանը հակված է դիտարկել իբրև գրչագրական շեղումներ⁴՝ միաժամանակ նշելով, որ հարցը վերջնականորեն կարող է լուծվել միայն մանրամասն ուսումնասիրությամբ:

Քննվող բառային տարբերակներն առանձնացվում են Մատենադարանի՝ «Հանդէս բանաստեղծաց...»-ի բոլոր ձեռագրերի համեմատությամբ: Երևույթը հավաք և ամբողջական ներկայացնելու, այլև կրկնություններից խուսափելու, շարադրանքն արհեստականորեն չընդարձակելու նպատակով բառային տարբերակները ներկայացվում են ըստ հայոց լեզվի շրջանաբաժանման փուլերի՝ XII–XVI դդ., այնուհետև՝ XVII դ.՝ հարկ եղած դեպքում անդրադառնալով միջին շրջանի ենթաշրջաններին:

Բնչպես նշում է Հ. Ամալյանը, «Հանդէս բանաստեղծացր...» վկայված է XII դարից Ջմմառի թիվ 204 ձեռագրով. «...նախագաղափար օրինակը չի պահպանված, նրա գրության ստույգ ժամանակը, տեղն ու հեղինակը անհայտ

¹ *Ձեռագիր բառարանների ձեռագրահամարները և ըստ դարերի բաշխվածությունը տե՛ս Ն. Հովհաննիսյան. Հումանիշների ձեռագիր բառարանների տեսակներն ու կազմությունը. «Հանդէս ամսօրյա», 1-12, 2005, էջ 133-166:*

² *Լ. Հովհաննիսյան. Բառային տարբերակներ V դարի գրաբարում. – Հայոց լեզվի պատմության հարցեր, պրակ 3, Երևան, 1991, էջ 5-60:*

³ *Գ. Ջահուկյան. Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան. Երևան, 1987, էջ 371 - 375:*

⁴ *Հ. Մուրադյան. Հայոց լեզվի պատմական քերականություն. հ. 1, Հնչյունաբանություն, Երևան, 1982, էջ 227: Հ. Մուրադյանը և, վ, ու տառերի՝ նույն հնչյունի արժեքով հերթագայվելու դեպքում ընդունում է ուղղագրական տարբերակներ ձևակերպումը (նույն տեղում, էջ 239):*

են»⁵: Եվ քանի որ ձեռագիր բառարանի հորինման ու գրչության ժամանակները տարբեր են, ուստի կարևորվում են ընդօրինակությունների՝ ըստ դարերի դրսևորած, սովյալ ժամանակաշրջանին բնորոշ, դրանից բխող զուգաձևությունները՝ հնարավորության սահմաններում շոշափելով ընդօրինակությունների՝ արևելյան կամ արևմտյան տարածքներին պատկանելը:

Քննությունից պարզվում է, որ մեծ քանակ են կազմում հնչյունական տարբերակները. բառակազմականները սահմանափակվում են ածանցային մի քանի տարբերակով:

Հնչյունական տարբերակներ

ա) Ձայնավորային փոփոխություններով տարբերակներ: Մեկական օրինակով են հանդիպում ա/ո, ա/օ և ա/ե տարբերակները⁶. աւոլոցել⁷ (Անջատել) - աւալոցել. թասել⁸ (Հինինել) // թասթել -թօսել. Պարենի - Պերենի // Պերանի:

Եթե առաջին տարբերակները հիշեցնում են ա(օ հնչյունափոխությունը Համշենի, Հաջրնի և Ագուլիսի բարբառներում (Համշենի բարբառում թասել-ը հանդիպում է թաստել ձևով՝ մասամբ պահպանելով պարսկերենի հնչողությունը (տե(ս) ՆՀԲ, I, 797), ապա ա/ե, ա/ո տարբերակներն ակնհայտորեն փոխազդեցական հնչյունափոխության արդյունք են:

XVII դարից վկայված ձեռագրերում հանդիպող տարբերակներն են օռչոցել, առողոցել, աւրլոցել. աւալոցել-ը ձեռագրերում բացակայում է. թասել, թասթել, թօսել, թաթսել. պարենի, պերենի և պերանի-ն հանդիպում են համարյա հավասարաչափ՝ 10:13:13 հարաբերությամբ, մեկական՝ պերենի, պերինի, պարենի, պիտանի տարբերակները:

Հ. Մուրադյանը, միջնադարյան գրավոր աղբյուրներում հանդիպող ա (ե հնչյունափոխության օրինակների մեծ մասը փոխազդեցական հնչյունափոխությամբ առաջացած ձևեր համարելով, դրա առաջին վկայությունը հասցնում է XII դար¹⁰: Հավելենք XII–XIII դդ. վկայված թիվ 5596 ձեռագրում առկա տարեկուսանել-ը (Դիսխին), որ հետագա XV, XVI, XVII դդ. հանդիպում է տարեկուսան և տարեկուսան տարբերակներով:

⁵ Հ. Ա մ ա լ յ ա ն. Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ. Երևան, 1966, էջ 121:

⁶ Բառային տարբերակներին կից՝ փակագծերում, տրվում է հոմանշային շարքի հենաբառը (եթե փակագծեր չկան, ուրեմն նշվածը հենաբառն է). կրկնվելու դեպքում հենաբառը չի նշվում. շարադրանքը չձանրաբեռնելու համար չեն նշվում նաև ձեռագրահամարները:

⁷ Տե՛ս «Աւոլոց ելանել, որ և աւելոց և աւալոց գրի».- Նոր բառգիրք հայկազեան լեզուի, I, Վենետիկ, 1836, էջ 397(այսուհետև՝ ՆՀԲ):

⁸ Բառի ստուգաբանությունը տե՛ս I. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Հայ-իրանական նոր ստուգաբանություններ. Երևան, 2005, էջ 29-30:

⁹ Հ. Ա ճ ա ո յ ա ն. Քննություն Համշենի բարբառի. Երևան, 1947, էջ 45, 229: Տե՛ս նաև Հ. Ա ճ ա ո յ ա ն. Հայերեն արմատական բառարան, 2, Երևան, 1973, էջ 157(այսուհետև՝ ՀԱԲ):

¹⁰ Հ. Մ ու Ր ա դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 108-109:

Ա -ի դիմաց ե, է է արձանագրել XIV–XV դդ. հիշատակարաններում Գ. Ջահուկյանը¹¹:

Ա/ն և ա/ե հնչունական զուգաձևությունները V դ. գրաբարում առանձնացրել է Լ. Հովհաննիսյանը¹². նրա նշած օրինակներից չկան ձեռագիր բառարաններում, իբրև բարբառային երևույթ էլ չեն արտացոլվել հիշատակարաններում:

Ե/Է: Նենգաժետ // նենգայժետ - նենգաժետ:

Միաժամանակ հարկ է նշել, որ միննույն ժետ իրանական փոխառյալ արմատը¹³ ախտաժետութիւն(ք) (Կիրք) բառում (բոլոր ձեռագրերում) վկայված է ե -ով, բացառությամբ XVII դ. թիվ 2281 ձեռագրի:

XVII դ. ձեռագիր բառարաններում նենգաժետ - նենգաժետ զուգաձևությունների բաշխումը համարյա հավասարաչափ է՝ 20:24:

Նաւապետ (Ղեկավար) - նաւապետ, բայց և վարժապետ-ը (Դետոր) բոլոր ձեռագրերում հանդիպում է ե -ով, իսկ վարդապետ-ը՝ մի քանի ձեռագրում:

XVII դ. ձեռագրերում վարդապետ -ը կրկնակի շատ է վարդապետ-ից: Նույն պատկերն է նաև վարժապետ - վարժապետ-ի դեպքում: Գերակշռում է նաև նաւապետ զուգաձևությունը. թիվ 2331-ում հանդիպում է նաւապետ բառը:

Գեթ - գէթ // Էթ - Եթ:

XVII դ. բառարաններում գերակշռողը գէթ, էթ տարբերակներն են:

Նշվածներին կարելի է հավելել բազմիցս հանդիպող ամեն/ ամէն, գոնե/ գոնէ, կաթողիկե/ կաթուղիկէ, յաւեժ/յաւէժ և այլ հնչունական տարբերակներ, որոնց մասին՝ ստորև: Ձեռագրերի թվարկումը, թերևս, մասնակիորեն է հնարավորություն ընձեռում՝ պարզելու, թե որ ձեռագրերին են բնորոշ ե-ով և ո-րոնց է -ով տարբերակները, քանի որ ձեռագրերում հանդիպում են հնչունական խառը տարբերակներ, թեև XVII դարից վկայվածներում իշխում են ե -ով (նաւապետ, վարդապետ) զուգաձևությունները:

Ե/Ի. Ի/Ե: Թեև ե/ի հնչունափոխության առաջին վկայությունները X դարից են¹⁴, սակայն ե/ի ձայնավորային փոփոխությամբ տարբերակներ հանդիպում են նաև XVII դարից վկայված բառարաններում՝ գեճ (Պոռնիկ)- գիճ, աւերել (Ջնջել) - աւիրել. վերջինս բավական հաճախ է հանդիպում խոսակցական լեզվում և համեմատաբար լայն տարածում ունի հայ բարբառներում¹⁵:

Ե-ի դիմաց ի է արձանագրում նաև Գ. Ջահուկյանը XIV–XV դդ. հիշատակարաններում¹⁶:

¹¹ Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. Բարբառային երևույթներ հայկական հիշատակարաններում. Երևան, 1997, էջ 29:

¹² Մանրամասն տե՛ս Լ. Հ ո Վ հ ա ն ն ի ս յ ա ն, Բառային տարբերակներ..., էջ 9–11:

¹³ Նույն տեղում, էջ 12:

¹⁴ Հ. Մ ու ը ր ա դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 117:

¹⁵ Նույն տեղում, 118–119:

¹⁶ Գ. Ջ ա հ ու կ յ ա ն, Բարբառային..., էջ 17:

Հ. Մուրադյանի հավաստումով ի-ի է գրության առաջին ստույգ տվյալները վերաբերում են XIII-XIV դդ.¹⁷: Այդ են հաստատում և քննվող բառարանները, թեև թիվ 5596 ձեռագիրն ըստ Մատենադարանի ձեռագրացուցակների վկայված է XII-XIII դարերից:

Բազմաշառաիդ¹⁸ (Անտառախիտ) - բազմաշառաեղ // բազմաշառաեղ. նույն հոմանշային շարքում բազմաշառաիդ բառն է վկայված մի քանի ձեռագրում. բալիդ (Խաւար) - բաւեղ, դիմավոր (Նմանութիւն) - դեմավոր, միտել (Փոփոխել) - մէտել // մետել :

Ի-ի դիմաց է արձանագրում նաև Գ. Ջահուկյանը XVII դ. հիշատակարաններում¹⁹ :

XVII դ. ձեռագրերի բազմաշառաեղ, բազմաշառաիդ, բազմաշառաիդ, դեմավոր, բաւեղ (բօեղ), մէտել, մետել, մետիլ, մտել տարբերակներին հավելենք հունարենից փոխառյալ վիռոն²⁰-ը (վիռ կամ վիռն. ՆՀԲ, II, 825) վեռոն (Կարպետ) տարբերակով:

Ի/ՈԻ: Ինչպես նշում է Լ. Հովհաննիսյանը, այս կարգի զուգաձևությունների թիվը մեծ չէ: Ձեռագիր բառարաններում դրանք սահմանափակվում են ծղիկ (Ձեռք) - ծղուկ տարբերակներով, որոնք իբրև գլխաբառեր արձանագրված են V դարից (ՆՀԲ, I, 1019):

XVII դարի ձեռագրերում առկա է միայն ծղուկ -ը:

Ո/ՈԻ: Միակ օրինակն է կաթողիկե (Բաս) // կաթողիկե - կաթուղիկե (նաև բառերի կոպիտ այբբենական դասավորությամբ բոլոր ձեռագրերում): Կաթողիկոս-կաթուղիկոս զուգաձևությունն արձանագրված է V դ. մատենագրությունում՝ «... եթե վերջինս վրիպակ չէ» դիտարկումով²¹:

XVII դ. ձեռագրերում գերակշռողը կաթուղիկե -ն է. կաթողիկե -ն հանդիպում է մի քանի, կաթողիկե-ն՝ միայն մեկ ձեռագրում: Այդպիսի եռագրություն է նշում նաև Հ. Մուրադյանը կաթողիկոսութիւն բառի համար XIV դ. մի ձեռագրում²²:

Ոյ/ՈԻ: Այս հնչյունափոխության վկայությունները վերաբերում են X-XI դդ.: Հ. Մուրադյանը այն բնորոշ է համարում արևմտյան տարածքի բարբառների²³: Արձանագրելով ոյ -ու զուգաձևություններ V դ. գրաբարում՝ Լ. Հովհաննիսյանը դրանք համարում է հնչյունափոխական²⁴:

¹⁷ Հ. Մ ու ը ը յ ա ն. նշվ. աշխ., էջ 123:

¹⁸ Շառաիդ - շառաեղ զուգաձևությունն առկա է V դարի մատենագրությունում. տե՛ս Լ. Հ ն վ հ ա ն ն ի ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 12:

¹⁹ Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. Բարբառային..., էջ 17:

²⁰ Վիռոն՝ ձևն է արձանագրում Ստ. Մալխասյանցը. տե՛ս Ս տ. Մ ա լ խ ա ս յ ա ն ց. Հայերեն բացատրական բառարան. հ. 4, Երևան, 1945, էջ 345 (այսուհետև՝ ՍՀԲԲ):

²¹ Լ. Հ ն վ հ ա ն ն ի ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 13:

²² Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, Ա, Երևան, 1972, էջ 85:

²³ Հ. Մ ու ը ը յ ա ն. նշվ. աշխ., էջ 123:

²⁴ Լ. Հ ն վ հ ա ն ն ի ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 16:

Բառարաններում հանդիպող հնչյունական տարբերակներն են՝ զգոյշ (Զգան) - զգուշ, նոյնադէմ (Նմանութիւն) - նունադէմ: Թիվ 7117 ձեռագրում նոյնադէմ -ին հաջորդում են նունաձև, նունանման, նունակերպ բառերը:

XVII դ. բառարաններում արձանագրված զգուշ-ից, նունադէմ-ից բացի հանդիպում են Գոյթ²⁵ (նան՝ Գութ), դուգն (Նուագ), համայգուգ (Համանգամայն), համբուր (Պարտ), նաւակառուց (Ղեկավար) տարբերակները: Այսպիսի բազմաթիվ օրինակներ է նշում Հ. Մուրադյանը Ամ. Ամասիացու (XV դ.) հեղինակային ձեռագրում²⁶:

Ե/ԻԻ: Միակ օրինակն է հեղինակ -ը ի(ա փոխազդեցական հետադարձ հնչյունափոխությամբ ձևավորված հեղանակ տարբերակով՝ վկայված թիվ 5596, 5925 ձեռագրերում, և հիւղինակ, հիւղանակ, հիւինակ, հիւանակ, հիւղական երկրաբառային տարբերակներով (ՆՀԲ նշում է նաև հեղինակ տարբերակը. ՆՀԲ, I, 83):

XVII դ. ձեռագիր բառարաններում գերակշռողը հիւղինակ -ն է. առկա են նաև հեղինակ, հիւղանակ գուգաձևությունները:

Ե/ ԵԱ: Գոնէ (Գեթ // գէթ) // գոնէ - գոնեայ . սորեկ (Սուրբ) // սորեձ // սորե - սորեակ: ՆՀԲ արձանագրում է նշված գուգաձևությունները (ՆՀԲ, I, II, 571, 730):

XVII դ. ձեռագիր բառարաններում բացի նշված գոնէ, գոնեայ -ից, որոնցից գերակշռում է գոնէ -ն, հանդիպում են գոյնեա, գոյնեայ, գոնիայ, գոնայ տարբերակները. առավել հաճախական է գոնեա-ն: Սորեկ-սորեակ գուգաձևությունից մոտ երկու անգամ շատ է առաջինի գործածությունը. հանդիպում են սորեկ (Պարգ), սորիկ, սորե գուգաձևությունները:

ԻԻ/ՈԻ: Իւ(ու հնչյունափոխությունը տեղի է ունեցել Սուշ-Սասուն-Երզնկա-Ակն-Մալաթիա-Կարին-Շապին-Գարահիսար տարածքի բարբառներում²⁷ և բնորոշ է միջին հայերենի տարբերակների մեծամասնությանը²⁸: Այդ հնչյունափոխությամբ բառեր են արձանագրված XII, XIV-XV դդ. հիշատակարաններում²⁹:

Ձեռագիր բառարաններում իւ(ու հնչյունափոխական տարբերակներից առկա են Հիւթ/իւթ-Հութ-ը՝ առաջինի գերակշռությամբ:

XVII դ. ձեռագրերում նույնպես գերակշռում է հիւթ տարբերակը: Բառերի այբբենական դասավորությամբ ձեռագրերում հանդիպում է միայն բառի՝ ւ-ով սկսվող տարբերակը, որն իբրև գլխաբառ՝ «Տ. Հիւթ» նշումով առանձնացնում է ՆՀԲ՝ վկայակոչելով Շարականներն ու Ճառքնտիրները, այլև Գր. Նարեկացու և Հովհ. Երզնկացու բանաստեղծագործությունները (ՆՀԲ, II, 922):

²⁵ Հ. Աճառյանը Ոզմի բարբառում արձանագրում է գ'ույթ ձևը. ՀԱԲ, I, Երևան, 1971, էջ 587:

²⁶ Ակնարկներ... , Ա, 103:

²⁷ Հ. Մ ու ը թ ա դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 189:

²⁸ Ակնարկներ... , Ա, էջ 105:

²⁹ Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. Բարբառային..., էջ 17, 30:

ԱԻՕ: *Բնչպես նշված է լեզվաբանական գրականության մեջ, աւ(օ հնչյունափոխությունը XII–XIII դդ. ամբողջովին ձևավորված և բավարար փաստերով հաստատված երևույթ էր, որը, սակայն, երկար ժամանակ գրության մեջ շարունակում էր արտահայտվել աւ -ով: Հ. Մուրադյանի դիտարկումներով միայն XIV դարից է սկսում հետևողականորեն կիրառվել օ-ն՝ երբեմն հանգելով չափազանցությունների այնպիսի դիրքերում, որոնցում այդ հնչյունափոխությունը բացառված էր (էլօ, մեռօ)³⁰:*

Բառարաններում նույնպես հանդիպում են նման օրինակներ. ընդ գրուաւօ, ընդ պատրուակօ (Ջանխուլ), աղօաղել (Լուտալ), օարտ (Օագք), արգօանդ (Մուրկ), բնօին (Համանգամայն), վօաշ (Պոռնիկ), հարօ (Իրք, Հողմ), անձօք (Օոցք), խնօ (Թուրմ), տակօին (Միշտ), նօավար (Ղեկավար), համահօաք // համահօագ (Համանգամայն): Առավել մեծ քանակ են կազմում -աւոր ածանցի - օր գրությամբ բառերը. անցօր (Պարենի), գլխօր (Հոյակապ), մշտնջենօր (Միշտ), դատօր (Տեր), ահօր (Անհաս), ականօր, հոչակօր (Հոյակապ), վտանգօր (Դլխիթ), խորհրդօր (Պատրուակեալ) և այլն: Քննվող ձեռագրերից միայն թիվ 1654-ն է XIV դարի վկայություն, մյուսները վկայված են XVI դարից, և եթե XIV դ. ձեռագրում նման օրինակները չորսն են (անձօք, նօավար, համահօագ, խորհրդօր), ապա հետագա դարերից վկայվածներում զգալի թիվ են կազմում: Նկատելի է, որ մինչև XIV դ. ընդօրինակված ձեռագրերում օ-ի գրության այդպիսի դեպքեր չկան:

Նշված ձեռագրերում միաժամանակ հանդիպում են -աւոր ածանցով բառեր, ինչպես՝ հովանաւոր, վարսաւոր (Անտառախիտ), գլխաւոր (Հոյակապ), փառանգաւոր (Կապարճք), հնարաւոր (Նենգաժէտ), փեշաւոր (Նմանութիւն), դեմաւոր (Նմանութիւն), անգաւոր (Հոյակապ):

*Նույն երևույթն է նկատվում XVII դ. ձեռագրերում³¹. հնարօր, նենգօր (Նենգաժէտ), դատօր **, բեղնօր (Մուրկ), սպասօր (Հնագանդ), ահօր **, չքօր (Փանաքի), հոչակօր **, մերձօր (Նմանութիւն), դիմօր, փեշօր (Նմանութիւն), գծօրք (Գիծք), անգօր:*

*Օ տառի գրությունը բացառող դեպքերից են՝ անբօ (Անհաս), պարսօ (Լուտալ), պրծօ, զերծօ, վիրիպէցօ (Ճողոպրեաց), վօաշ ** (Շուայտեալ), գրօ, օարտ ** (Օագք), խնօ ** (Թուրմ), բնօ (Հոյակապ), նօավար **, նօագ, նօապետ (Ղեկավար), նօապետ, համահօ(վ)աք **, անիրօ (Նմանութիւն). (աստղանիշով առանձնացվածները հանդիպում են նախորդ շրջանում):*

Ըստ հաշվարկների՝ աւ (օ հնչյունափոխությամբ ձևերի առատությամբ առանձնանում են XVII դ. թիվ 536, 2291, 2369, 7014 ձեռագրերը, որոնցում բացի նշվածներից առկա են նաև դօանել, հօանել, օերել, տօիդ, ապօէն, հօան, յօէտ, յօէժ, խօարասէր, սպասօրագոյն, հարկօրել, ընչօէտ, ապօրտակ, խօար (-

³⁰ Ակնարկներ ... , Ա, 97, էջ 98:

³¹ Ուշագրավ է, որ նույն դարերի հիշատակարաններում այսպիսի երևույթ արձանագրված չէ:

ծին, - սեր, -ամած), բօեղ, հօսսար *ձևերը: Միաժամանակ թիվ 2369 և 7014 ձեռագրերում առկա են անբաւ և մերժաւոր (Արդակ) ձևերը:*

Չայնավորների հավելումով և անկումով տարբերակներ: Ա/զրո: *Միջնավանկի և ձայնավորի անկում է արձանագրված միջնադարյան հիշատակարաններում³². ինչպես և նշում են լեզվաբանները, այն բնորոշ է արևմտյան տարածքի բարբառներին³³:*

Կողմանակի (Առիշեղ) - կողմնակի, կողմանակ (Առիշեղ) - կողմնակ. *սրանք (կողմանակի -կողմանակ, կողմնակի -կողմնակ), թերես, հարկ է ընդունել իբրև մեկ տարբերակ, որքանով բառագույգերի առաջին եզրերը վկայված են ՆՀԲ - ում (ՆՀԲ, I, 112):*

Այս խմբում են ներկայացված նաև և հողակապով և առանց հողակապի տարբերակները, քանի որ շատ չեն. վատաբախտ (Փանաթի) // վատաբաղտ // վատավախտ -վատբախտ: Թիվ 8106 ձեռագրում հանդիպում է յարկա -ն (Միշտ). մյուս ձեռագրերում վկայված են յարակա և յարակայ հնչյունական տարբերակները: Համագոյգ-ը (Համանգամայն) վկայված է համգոյգ, համգոյք և հայգոյգ գուգաձևություններով:

XVII դ. ձեռագրերում գերակշռում է կողմանակի-ն. հանդիպում են նաև կողմնակի, կողմնակ, կողմանակ տարբերակները:

Մեկական են հանդիպում խորամանկ (Նենգաժետ)-խորմանք, ծառանոց (Անտառախիտ) ծառնոց գուգաձևությունների՝ և ձայնավորի անկումով եզրերը:

Հողակապով և առանց հողակապի տարբերակներից առկա է արդեն առանձնացված վատբախտ-ը, նաև՝ ստուերամած (Խաւար) - ստուերմած, ընդիմահար (Խոշոր) - ընդիմհար գուգաձևությունները:

XVII դ. ձեռագրերում արձանագրվում է և հողակապի հավելման մեկ օրինակ՝ ոսկեափայլ (Լոյս):

Ի ձայնավորի անկում է նկատվում անճոռն (Վիթխարի), վաղվաղակ, փութանակ (Վաղվաղակ(ի)) բառերում: XVII դ. ձեռագրերում միայն մեկ անգամ է հանդիպում վաղվաղակ -ը:

Սրանք, թերես, կարելի է գրչագրական վրիպումներ համարել:

Հավելյական ի -ով է առանձնանում փարթար -ը (Գէթ)՝ փարթարի:

Նշենք, որ ձեռագիր բառարաններում արձանագրված չեն պարենի և առնի (Դուար) բառերի ուղիղ ձևերը. հիշատակված է նաև առնիս-ը, ուրենն և կարելի՞ է թե այդպիսիք համարել ի-ի հավելումներ:

XVII դ. ձեռագրերում հանդիպում են փարթարի, փարթառ տարբերակները:

Այս դարի ձեռագիր բառարաններում՝ կիշիռ(Արդակ)-կշիռ, վիրիպեցօ (Ճողոպրեաց) -վրիպեցաւ, վիրիռն (Կապերտ) -վիրոն բառերում, ակնհայտ-

³² Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. Բարբառային..., էջ 11, 15, 30:

³³ Հ. Մ ու ը ր ա դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 86-87: Սկնարկներ ..., Ա, էջ 74:

րեն հետընթաց առնմանման ազդեցություն է³⁴. մեկ անգամ է հանդիպում չիքաւոր -ը (Փանաքի):

ՈՒ ձայնավորի հավելում է նշվում XVII դարից վկայված ձեռագրերում՝ երդումնագանց (Ամեղել), և անկում՝ դժարին (Դլխիտ) բառերում. սրանք չկան XII–XVI դդ. ձեռագիր բառարաններում: Դժար-ն առկա է Արարատյան, Թրիլիսիի, Հավարիկի, Սասունի, Վանի, Խոտորչուրի բարբառներում³⁵: Գ. Ջահուկյանը XII դ. հիշատակարաններում հանդիպող դժար-ը համարում է խոսակցական-բարբառային գործածություն³⁶:

Ո-ի հավելման միակ օրինակն է վոհուկ - վհուկ: Ջուգաձևությունն արձանագրել է Լ. Հովհաննիսյանը Եփրեմ Ստորու ճառերից մեկում և Յովհան Ոսկեբերանի՝ Եսայի մարգարեի մեկնություններում³⁷:

XVII դ. ձեռագրերում վոհուկ-ը հանդիպում է թիվ 529, 2369, 3200- ում և մեկ անգամ վեհուկ տարբերակով:

ԱԻ/զրո: Փառանգաւոր (Կայարճ(ք)) - փառանգոր // փառանգոյր:

XVII դ. միայն թիվ 2019, 2331, 2431, 3286, 6097 ձեռագրերում հանդիպում է փառանգոր -ը:

Միջնադարյան ձեռագրերում-աւոր ածանցի ուղղագրական շեղում է արձանագրել Հ. Մուրադյանը, երբ հապավվել է ածանցի ւ տառը³⁸: Ուշագրավ է, որ փառանգոր հնչյունական տարբերակն է առկա այն ձեռագրերում, որոնցում ածանցն արտահայտված է- օոր գրությամբ:

բ) Բաղաձայնական փոփոխություններով տարբերակներ: Զգալիորեն բազմաթիվ են բաղաձայնական փոփոխություններով հնչյունական տարբերակները, որոնց շարքում էլ մեծ քանակ են կազմում ձայնեղ / խուլ բաղաձայններով տարբերակները:

Բ/Պ: Բեւկէ (Բոց) - պեւկէ³⁹: Թիվ 8106-ում հանդիպում է ըմպոշխնել-ը. մյուս ձեռագրերում արձանագրված է բ բաղաձայնով:

Գ/Կ: Գայթակղել (Բոնադատել) - գայթագղել, ընկեցեալ (Կորակնեալ) - ընգեցեալ, թանկուզել (Յախուռնախաւս) - թանգուզել, Ժառանգ - Ժառանկ, Լոգանալ - Լոկանալ, լոկ (Մոսկ) - լոգ, խորամանկ (Նենգաժե/էտ) - խորամանգ, խոշտանգել (Ջնջել) - խոշտանկել, Ծագք - Ծակք, մանկութիւն, մանկակերտ, մանկատիս (Համբակ) - մանգութիւն, մանգակերտ, մանգատիս, մանկագիտեալ (Պոռնիկ) - մանգագիտեալ, նուագք (Երգք) - նուակք, Վտանգք - Վտանկք // Վտակք, վանգ (Ձայնք) - վանկ, սիգալ (Ջոջալ) - սիկալ, տնանկ (Փանաքի) - տնանգ:

³⁴ Համանման երևույթ (ը-ի լիաձայնություն) է արձանագրել Գ. Ջահուկյանը նաև XIV–XV դդ. հիշատակարաններում. Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. Բարբառային..., էջ 29:

³⁵ Հայոց լեզվի բարբառային բառարան. հ. Ա, Երևան, 2001, էջ 330 (այսուհետև՝ ՀԼԲԲ):

³⁶ Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. Բարբառային..., էջ 31, 48:

³⁷ Լ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 14:

³⁸ Հ. Մ ու ռ ա դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 101:

³⁹ ՆՀԲ նշում է, որ հին բառարաններում (ԺԳ - ԺԴ դդ.) առկա են Բոց, հուր, ջահ, պեւկէ փաղանունները՝ «որ չէ՛ ի դէպ» հղումով (ՆՀԲ, II, 647):

Ղ/Տ: Բոնադատել (Հայցել) - բոնադադել, ընտանեգոյն (Պարտ) - ընդանեգոյն // ընդանեգոյն, ընտիր (Սուրբ) - ընդիր, հանդարտ (Հաշտ) - հանտարտ, Սպանդ - Սպանտ, Սպրդել - Սպրտել:

Օ/Չ: Գեղապանծ (Հոյակապ) // գերապանծ - գեղապանծ, ընծայք (Սպանդ) // ընծայ - ընծայ // ընծա, ընծիդել (Ծագել) - ընծիդել // ընծեդել, պանծալ (Այտուցեալ // պածալ - պանծալ // խաչապանծալ:

Ճ/Ջ: Անձոռնի (Վիթխարի) - անջոռնի, գեճ // գեճ (Թուրմ, Պոռնիկ) - գեջ // գեջ, ինջոյ (Խազմ) - ինձոյ , խուճապ (Խազմ) - խուջապ, վախճան (Ծագք) - վաղջան:

Հետևելով ձեռագրահամարներին՝ կարելի է նկատել, որ մի քանի բառարաններում գերակշռում են ձայնեղ բաղաձայններով հնչյունական տարբերակները, չնայած նույն բառարաններում արձանագրված են և խուլ բաղաձայններով հնչյունական տարբերակներ: Այսպես՝ թիվ 530-ում՝ արձագանգ, գեղապանծ, ընծայ, խորամանգ, պանծալ, տնանգ, բայց և՛ խոշտանկել, ինձոյ, վանկ, վտանկք. թիվ 532-ում՝ աւոոց, ընդանեգոյն, հաջել, շանդիք, բայց և՛ արձականք, հանտարտ, սպանտ, վտանկք. թիվ 5596-ում՝ գայթագղել, ընգեցեալ, ընդիր, խորամանգ, մանգակերտ, մանգատիս, մանգութիւն, շանդիք, պանծալ, միաժամանակ՝ հանտարտ. թիվ 8106-ում՝ ընդիր, խուջապ, բայց և՛ լոկանալ, սիկալ, վտանկք. թիվ 4149 ձեռագրում՝ հաջել, մանգագիտեալ, ներգել, շանդիք, տնանգ, միաժամանակ՝ ընծիդել, ժառանկ, վտանկք. թիվ 5126-ում՝ երեգսքանչեան, ընդանեգոյն, ընդիր, օոոց, բայց և՛ խոշտանկել, և այլն:

Ակնհայտորեն գերակշռող դիրքը և՛ ոնգայինից հետո է:

Խուլի ձայնեղացում (մասնավորապես նշված դիրքում) է արձանագրում Գ. Ջահուկյանը հիշատակարանների լեզվում⁴⁰. հնչյունական այս կարգի երևույթ է առկա Վանում, Մուշում, Շատախում, Մոկսում, Աղվանքում գրաված հիշատակարաններում:

Նախորդ շրջանում արձանագրված և XVII դ. մեկից ավելի ձեռագրերում հանդիպող գայթակղել-գայթագղել, ընկեցեալ- ընգեցեալ, խորամանկ-խորամանգ, մանկութիւն- մանգութիւն, վանկ - վանգ, տնանկ - տնանգ և՛ վտանգք - վտանկք, խոշտանգել -խոշտանկել տարբերակներին⁴¹ հավելենք հետևյալները՝ անկումն - անգումն (Ծագք), երկ - երգ (Ջան), կորակնեալ - կորագնեալ (Կորացեալ), կրկտել -կրգտել (Հայցել),Ղեկավար -Ղեգավար, յանկագոյն-յանգագոյն (Արդակ), յանկանուրդ - յանգանուրդ (Ծագք), նկարագիր -նգարագիր (Նմանութիւն), ցանկացող - ցանգացող (Պոռնիկ) և՛ արձագանք - արձականք

⁴⁰ Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 12, 16, 22, 27-28:

⁴¹ XVII դ. ձեռագիր բառարաններում այդ տարբերակները (նշվող մասնակի բացառություններով) սահմանափակվում են մեկ-երկու ձեռագրով: Ուստի ներկայացնելով մեկից ավելի ձեռագրերում հանդիպող արդեն արձանագրված տարբերակները՝ առանձնացվում է գուգաձևությունների՝ միայն ձայնեղ կամ խուլ բաղաձայնով եզրը, քանի որ մյուս ձեռագրերում համապատասխանաբար միայն խուլ կամ միայն ձայնեղ բաղաձայնով եզրն է: Նույնը և՛ մյուս հնչյունական տարբերակների դեպքում:

(Չայն), լուսերանգ - լուսերանկ⁴² (Լոյս), գայթեղ-կայթեղ (Կաղալ), հանգուցել - հանկուցել (Հարել), Նենգաժետ - Նենկաժետ, վտանգաւոր - վտանկաւոր (Դիխիտ), սրինգ - սրինկ (Երգ), պագշոտ - պակշոտ⁴³ (Պոռնիկ):

Մեկական են հանդիպում ք/պ բաղաձայններով տարբերակները. ամպ-րոպ - ամպրոք (Խազմ), ամբրոպ, Կողոպուտ - Կողոբուտ, հրապուրող - հրաբուրող (Տարտողական), վրիպեցաւ - վրիբեցո (Ճողոպրեաց). ամբարյաված - ամպարյաված (Այտուցեալ), անըմբոնելի - անըմպոնելի (Անհաս), բամբասել - բամպասել (Լուտալ), ըմբոն - ըմպոն (Պարտ), ըմբոնել - ըմպոնել (Հասանելի): *Մեկից ավելի ձեռագրերում՝* ըմբահկեալ - ըմպահկեալ (Այտուցեալ), տրուպ - տրուբ (Խոնարհ) *տարբերակները:*

Առանձնացված տարբերակները նախորդ շրջանում չեն հանդիպում:

Դ/Տ: Արդեն առանձնացված տարբերակներից առկա են ընտիր - ընդիր, ընտանեգոյն-ընդանեգոյն*, սպրդել - սպրտել (*գերակշռող տարբերակ*): Մյուսները հանդիպում են մեկական օրինակով. անյայտ - անյայդ (Անհաս), դատավճիռ - դադավճիռ (Անհաս), տաժանելի - դարժանելի (Դիխիտ), դանդաղիլ-տանտաղիլ (Դեգերել), դուզնաքեայ, դոյզն - տուզնաքեայ, տոյզն (Լուսաղ), դրդուել - տրտուել (Փոփոխել), նշդեհ - նշտեհ (Փանաք), վարդապետ - վարդապեդ (Հեղինակ). *մեկից ավելի ձեռագրերում՝* արգաւանդ - արգաւանտ (Մուրկ), պինդ - պինտ* (Հաստատուն) *տարբերակները:*

Ծ/Չ: Մահմանափակվում են չորս տարբերակով՝ սոսնձել-սոսնձել (Յարել), մերձաւոր-մերձաւոր (Արդակ). ծղուկ- ձղուկ (Չեք), ընձայ - ընձայ*. *աստղանիշով առանձնացվածները առկա են V դարի մատենագրության էջերում ընդդեմ, ընդանի, պնտել, ընձայ տարբերակներով*⁴⁴:

Ճ/Չ: Նախորդ շրջանում արձանագրված անճոռնի-անջոռնի, գիջ, գէջ-գիճ, գէճ, *տարբերակներից բացի՝* առկա են Անջատել - Անճատել, ըռոճիկ-ըռոջիկ (Պերանի), ինքնահաճ-ինքնահաջ (Այտուցեալ), խոնճ (առնել) - խոնջ (առնել. Չան), հակիրճ-հակիրջ (Հատու), պատշաճ-պատշաջ (Պարտ) *տարբերակները:*

Ը-ից հետո և միջձայնավորային ու բառավերջին ետձայնավորային դիրքում խուլ պայթականների ու կիսաշփականների ձայնեղություն առկա է «արևմտահայ» բարբառախոս վայրերում⁴⁵:

Գ/Ք: Արձագանք (Չայնք)-արձագանգ // արձակագանգք, բուք (Իրք, Միտք) - բուգ, թաքչիլ (Դուռել, Դուղել, Դուղել)- թագչիլ (Դութել), Լոգանալ-լոքուանալ, հեգ(Փանաքի) -հեք/հեք, յոգնարինակ (Բագմապատիկ)//յոգնօրինակ - յոքնարինակ // յոքնօրինակ // ոքնօրինակ, ներքեւեալ (Փանաքի) - ներգեւ,

⁴² Լուսերանկ-ը լուսներանկ ձևով հանդիպում է XII դ. հիշատակարաններում. տե՛ս Գ. Ջ ա հ ու կ յ ա ն, նշվ. աշխ., էջ 16:

⁴³ Պակշոտ -ը արձանագրված է V դ. մատենագրությունում. տե(ս Լ. Հ ո վ հ ա ն - ն ի ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 18:

⁴⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 19:

⁴⁵ Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. Հայ բարբառագիտության ներածություն. Երևան, 1972, էջ 46, 32:

շոգմոզող (Քահանայ) - շոքմոքող, սեգ// սեգ (Հոյակապ)-սեք, Փափագել(Պիտակ,Քարքել)-փափաքել, փարագ (Պոռնիկ) - պարաք:

Դ/Թ: Աւթոց (Կարպետ) - աւդոց // օդոց:

Ջ/Չ: Հաչել (Չայն) // հաչ-հաջել:

XVII դարից վկայված ձեռագիր բառարաններում առկա գ/ք բաղաձայններով տարբերակները, ինչպես և մյուս հնչյունական տարբերակների դեպքում, սահմանափակվում են մեկ-երկու ձեռագրով: Արդեն արձանագրված արձագանք - արձագանգ, թաքչիլ - թագչիլ⁴⁶, լոգանալ - լոքտանալ, փափագել - փափաքել տարբերակներին հավելենք առաքինանալ - առագինանալ (Նահատակել), բարքողել-բարգողել (Լուտալ), ի բաց առաքել - բաց առագել (Անջատել), երեքլուսեան, երեքսքանչեան - երեզլուսեան, երեզսքանչեան (Լոյս), գոյգ - գոյք (Արդակ), համագոյգ - համագոյք (Համանգամայն), համահաւաք-համահաւագ (Համանգամայն), մաքրել-մագրել (Լոգանալ), յանդուզն - յանդուքն (Ամեղել), պագշոտեալ - պաքշոտեալ (Պոռնիկ), ջայլանք - ջայլանգ (Վտանգք), տագնապել (Հինել)-տաքնապել(Հինել. Վաղվաղակի):

Բ/Փ և Դ/Թ բաղաձայններով տարբերակները մեկական են՝ գաղափար - գաղաբար (Նմանութիւն) և արդեն արձանագրված օթոց - օդոց (Կապերտ):

Ջ/Չ: Նախորդ շրջանում հանդիպած հաչել - հաջել -ին հավելվել են հոչակաւոր - հոջակաւոր (Հոյակապ), ճաճանչ - ճաճանջ (Լոյս), յաչադկոտ - յաջադկոտ (Նենգաժէտ), շունչ - շունջ (Իրք), վայելուչ - վայելուջ (Պարտ) տարբերակները:

Խուլ/շնչեղ խուլ բաղաձայններով տարբերակներ: XII-XVI դդ. ձեռագիր բառարաններում միակ գուգաձևությունը փարագ (Պոռնիկ) - պարաք-ն է:

XVII դարից վկայված բառարաններում նշված հնչյունական տարբերակները փոքր- ինչ շատ են:

Պ/Փ: Փարագ - պարաք - ին հավելվել են անչափ - անչապ (Անհաս), շտապել - շտափել (Հինինել), տրուպ -տրուփ (Խոնարհ) տարբերակները:

Կ/Ք: Սահմանափակվում են մեկական օրինակով և մեկական ձեռագրում՝ թաքչիլ - թակչիլ (Դուռել), սայթաքել - սայթակել (Բոնադատել), սիք- սիկ (Իրք), խորամանկ - խորամանք (Նենգաժէտ), ծանակ - ծանաք (Պոռնիկ), հասկ - հասք (Մուրկ), հերատուկ - հերատուք (Պոռնիկ), Պոռնիկ-Պոռնիք, վաստակ - վաստաք (Ջան), տնանկ - տնանք (Փանաքի):

Նույնը և Թ/Տ բաղաձայններով գուգաձևությունները. յադթանդամ - յադտանդամ (Վիթխարի), սադարթափթիթ - սադարտափթիթ (Անտառախիտ), Վիթխարի -Վտխարի:

Ճ/Չ: Տոչորել - տոճորել (Բոց):

⁴⁶ *V դ. գրաբարում հանդիպում է թագուցեալ / թաքուցեալ տարբերակներով. տե՛ս Լ. Հ ն վ հ ա ն ն ի ս յ ա ն ն. նշվ. աշխ., էջ 22:*

Ոչ բառասկզբի շնչեղ-խուլերի ապաշնչեղության առկայությունն բնորոշ է «արևմտահայ» բարբառախոս վայրերին⁴⁷:

Բաղաձայնական այլ կարգի փոփոխություններով տարբերակներ: Խ/Ղ: Հ. Մուրադյանի հավաստումով XII դ. վերջերից ձեռագրերում սովորական է դ - ի և խ -ի գրության շփոթը⁴⁸: Լ. Հովհաննիսյանի հիմնավորումով էլ V դ. մատենագրության մեջ լծորդ հնչյունները ներկայանում են և ղխ խղ հնչյունախմբով⁴⁹: Բնական է, որ նման դեպքեր հանդիպում են ձեռագիր բառարաններում. զեխ (Պոռնիկ) - զեխղ // զեղխ, ընդկոխունել (Ջնջել)-ընդկողունել, թախձանք⁵⁰ (Վտանգք) - թաղձանք // թաղխձանք, թախանձք-թաղանձք⁵¹, ժխոր (Խազմ) - ժղոր, ի ձոխ (Առիշեղ)-ի ձող, յաղթանդամ (Վիթխարի) - յախթանդամ, վախճան (Օագք) - վաղճան // վաղջան // վաղխճան: XVII դ. բառարաններում հանդիպում են արդեն արձանագրված վախճան - վաղճան, յաղթ-յախթ տարբերակները. վերջինս նաև յախթել (Բռնադատել) բայում: Նոր տարբերակներից են՝ աղքատ - ախքատ (Փանաքի), խախտել -խաղտել (Յարել), աղջամուղջ - աղջամուխջ (Խաւար), սխալ - սղալ⁵² (Տարատողական). վերջինիս՝ տարբեր հոլովաձևերով վկայություններ է արձանագրել Գ. Ջահուկյանը XIII դ. Կիլիկիայում, Երզնկայում գրառված հիշատակարաններում⁵³:

Շ/Ժ: Միակ օրինակն իրանականից փոխառյալ նժդեհ (Փանաքի) բառն է՝ նշդեհ հնչյունական տարբերակով, որ առկա է V դ. գրաբարում⁵⁴:

Նժդեհ - նշդեհ տարբերակն է առկա XVII դ. բառարաններում:

Ջ/Ս: Ջգոն հենաբառով հոմանշային շարքում առկա սգոն և սգաստ⁵⁵ հնչյունական տարբերակներն արձանագրված են միայն թիվ 3937 ձեռագրում, բայց և նույն ձեռագրում՝ նույն հոմանշային շարքում, առկա է զգոյշ-ը:

Խաւարագգած-ը (Խաւար) խաւարասգած տարբերակով հանդիպում է միայն թիվ 5596 ձեռագրում:

Այդ շարքում արձանագրելով նաև աստուածագգեստ (Աստուածագան) - աստուածասգեստ տարբերակները՝ հարկ է հավելել, որ մի քանի ձեռագրում՝ Աստուածագան հենաբառով հոմանշային շարքում, առկա է աստուածագգեաց -ը:

⁴⁷ Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. Հայ բարբառագիտության..., էջ 46:

⁴⁸ Հ. Մ ու ղ յ ա ն. նշվ. աշխ., էջ 212:

⁴⁹ Լ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 20:

⁵⁰ Թախիժ - թաղիժ արմատի մասին տե՛ս նույն տեղում, էջ 21:

⁵¹ Թախանձք-ն ու թաղխձանք-ը արձանագրված են նույն հոմանշային շարքում. առաջինը հավանաբար սխալագրություն է:

⁵² Հ. Մուրադյանի կարծիքով «Այսպիսի գրչություններում պարզապես գործ ունենք լծորդ հնչյուններն արտահայտող տառերի շփոթի հետ»։ տե՛ս Ակնարկներ..., Ա, էջ 132:

⁵³ Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. Բարբառային..., էջ 23:

⁵⁴ Լ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 31:

⁵⁵ Բառասկզբի նախաբաղաձայնական դիրքում գ-ի խլացման օրինակներ կարելի է գտնել հիշատակարաններում. Հ. Մ ու ղ յ ա ն. նշվ. աշխ., էջ 248 - 249: Սգաստ-ն առկա է V դ. գրաբարում. Լ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 21:

Մ/Խ: Միակ օրինակը նաև V դ. մատենագրության մեջ հանդիպող դրախտ (Բուրաստան) - դրաստ զուգաձևությունն է, որն արձանագրված է և XVII դ. բառարաններում:

Ը/Ռ: Յախուռնախաւս - Յախուրնախաւս. դեկավառ և փառագ տարբերակներն են հանդիպում թիվ 3197 ձեռագրում, մինչդեռ յախուռնախաւս-ը այդ ձեռագրում արձանագրված է նաև ր-ով՝ յախուրնախաւս:

XVII դարի միայն երկու ձեռագրում է առկա յախուրնախոս-ը: Հանդիպում են նաև խոտորնակ -խոտոռնակ (Առիշէդ) և պրծաւ - պոծաւ (Ճողոպրեաց) տարբերակները:

Ռ>ր հնչյունափոխության փաստ է առկա միջին հայերենով գրված մի շարք ձեռագրերում⁵⁶, հայերենի բարբառներում⁵⁷: Ըստ Գ. Ջահուկյանի՝ ո-ի և ր-ի շփոթությունն ոչ նախաբաղաձայնական դիրքում նկատվում է Կուտիի, Հաջրնի, Թավրիզի, Թրիլիսիի, Տումիի, Բուրդուրի և Մարաղայի բարբառներում, առավելապես «արևելահայ» բարբառախոս վայրերում, ինչպես և XII–XV դդ. հիշատակարաններում⁵⁸:

Հ. Մուրադյանը սրանք համարում է «բանավոր լեզվի առանձին տարբերակներում կատարված փոփոխություններ..., երբեմն նաև անհատական լեզվի առանձնահատկություններ, որոնք գրիչ - փորագրողների և արտագրողների կողմից մուծվել են գրավոր լեզվի մեջ»⁵⁹:

Լ/Ղ: Հողեալ (Կորացեալ) - հոլեալ:

XVII դարից վկայված բառարաններում գերակշռող տարբերակը հոլուվեալ-ն է. հոլեալ ու հողեալ տարբերակները հանդիպում են համարյա հավասարաչափ:

Լ-ի և դ-ի գրության շփոթ արձանագրելով «մեզ հասած առաջին իսկ ձեռագրերում»՝ Հ. Մուրադյանը դրանց փոխանցումները հասցնում է մինչև XII դ. վերջերը՝ ավելի ուշ շրջանի համար այդ երևույթը համարելով եզակի արտահայտություն⁶⁰:

Ըստ ՀԱԲ-ի՝ հողեալ «ընկեցեալ» իմաստով «ունի միայն Բառ. երեւ.» (ՀԱԲ, 3, 112): Թիվ 5596 ձեռագրում, որ ամենավաղ ընդօրինակվածներից է, հանդիպում է հոլեալ-ը. այն բառարաններում արձանագրված չէ:

Ինչպես հոլ-ի համար նշում է Հ. Աճառյանը, «Պարզ արմատը հնիս. pel, pol- «բանալ, տարածել, պարզել, փռել» տալիս է հյ. հոլ և հող» (ՀԱԲ, 3, 109.–ընդգծումը մերն է.–Ն. Հ.): Հետևաբար կարելի է ընդունելի համարել և(հոլեալ-ը, և(հողեալ-ը՝ «արհամարհված, անպիտան, անարգ» իմաստներով, քանի որ փովոդ, փոված մարդը (անկախ այն հանգամանքից, թե ինչ-որ մեկի առջև է փովում - տարածվում կամ փովել - տարածվել, ասել է՝ ծառայում, սպասա-

⁵⁶ Տե՛ս Հ. Մ ու ր ա դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 222:

⁵⁷ Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. Հայ բարբառագիտության ներածություն, էջ 51-62, 48:

⁵⁸ Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. Բարբառային երևույթներ ..., էջ 17, 22, 28:

⁵⁹ Ակնարկներ ..., Ա, էջ 141:

⁶⁰ Լ-ի և դ-ի մասին մանրամասն տե(ս Հ. Մ ու ր ա դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 206-217, 211:

վորում, թե ինքն է փռված - մեկնված, ասել է՝ անհոգ, անդարդ - անցավ ապրում) արհամարհված է ու անպատիվ:

Ն/Մ: Անբիծ(ք) (Մուրբ) - ամբիծ, բամբասել (Լուտալ) - բանբասել:

XVII դարից վկայված բառարաններում ամբիծ-ը պահպանված է երկու, բանբասել-ը՝ երեք ձեռագրում: Մեկական են հանդիպում անպրոպ -ը, անփոփել-ը (Հասանելի) և շանբուշ -ը: Այս տարբերակների⁶¹ գոյությունը պայմանավորված է փոխազդեցական հնչյունափոխությամբ: Ինչպես նշվում է գիտական քերականություններում, շրթնային պայթականի առկայությամբ ն -ն առնամանությամբ փոխվում է մ -ի:

Հ/Խ: Պահեալ - Պախեալ. նիխար բառն է առկա թիվ 5126 ձեռագրում:

Խ-ի դիմաց ոչ տարնմանական հ է առկա Ագուլիսի բարբառում⁶²:

Հ>խ հնչյունափոխությունը, ինչպես նշում է Հ. Մուրադյանը, հաստուկ էր միայն Վասպուրականի և նրան հարող շրջանների հայերեն խոսվածքներին և տիպական չէր միջին հայերենին⁶³:

XVII դ. բառարաններում պախեալ տարբերակը չի հանդիպում: Գերակշռում է նիխար-ը:

Բաղաձայնների անկումով և հավելումով տարբերակներ: Բ/զրո: Շամբուշ - Շամուշ, թմբբեալ (Շամբուշ, Դեզերել) - թմբեալ⁶⁴:

XVII դարից վկայված բառարաններում գերակշռողը շամբուշ-ն է. մեկական են հանդիպում շամփուշել-ն ու շավիուշել-ը:

Մյուս զուգաձևությունը հանդիպում է հետևյալ տարբերակներով՝ թմբբեալ - թմբեալ, թմբբել - թմբել, թմբբիլ - թմբիլ. արձանագրվում է նաև թրմիլ ձևը:

Գ/զրո: Գեթ // Գէթ - Եթ // Էթ:

XVII դ. ձեռագրերում գերակշռում է Էթ-ը:

Բաղաձայնների անկում-հավելումով մյուս զուգաձևությունները մեծ մասամբ վկայված են V դ. գրաբարում: Այսպես՝

Ը/զրո: Յավերժ (Միշտ) // յավերժ - յավեժ // յավեժ, Պարհել - Պահել, թաշկինակ (Կարպետ) - թարշկինակ. թարշկինակ տարբերակը ՆՀԲ արձանագրում է իբրև «ռամկորէն» (ՆՀԲ, I, 799): Բաժամտել (Տարակուսել) - բարժամտել, տաժանելի (Դիլսիթ) - տարժանելի՝ վկայված նաև տարժանել, տարժանելին տարբերակներով. վերջինս, ամենայն հավանականությամբ, կազմված է հոմանշային շարքում նախորդող դժուարին բառի նմանությամբ, որքանով հաջորդող անհանդուրժելին նույնպես բառավերջում ունի ն հավելում:

⁶¹ Տարբերակները կան ՆՀԲ-ում. տե՛ս ՆՀԲ, I, էջ 56, 123, 430, 436:

⁶² Գ. Ջ ա հ ու կ յ ա ն ն. նշվ. աշխ., էջ 47, 59:

⁶³ Ակնարկներ ..., Ա, էջ 133-134: Այդպիսի երևույթ է նկատվել նաև ասորական աղբյուրներում. տե՛ս Լ. Տ ե ր - Պ ե տ ր ո ս յ ա ն ն. Միջին հայերենի հնչյունաբանությունը ըստ ասորական աղբյուրների. - ՊԲՀ, 1974, № 3, էջ 153:

⁶⁴ Ձուգաձևություններն արձանագրված են V դ. գրաբարում. տե՛ս Լ. Հ ո վ հ ա ն - ն ի ս յ ա ն ն. նշվ. աշխ., էջ 29:

XVII դարի՝ բառերի այբբենական դասավորությամբ ձեռագիր բառարաններում բացակայում է Միշտ հենաբառով հոմանշային շարքը: Մյուս ձեռագրերում հանդիպում են յաւերժ // յօերժ - յաւէժ // յօէժ, Պահել // Պահեալ - Պարհել տարբերակները:

XVII դ. բառարաններում իշխում է ՆՀԲ -ի «ռամկօրէն» նշած թարգմանակ -ը. միայն թիվ 2331 ձեռագրում է հանդիպում թարգմանակ -ը:

Բ-ի հավելում է առկա արդեն արձանագրված տաժանելի - տարժանելի և բաժամտել - բարժամտել գուգաձևություններում:

Ն/զրո: Ն-ի հավելումով է հանդիպում թափառնական-ը (Փանաքի), որն առկա է նաև V դարի գրաբարում⁶⁵: Մեկական են արձանագրված բանբանել-ը և փառանգնաւոր -ը:

Հ/զրո: Հսկայ (Վիթխարի) - սկայ⁶⁶ // սկա, Հիւթ - իւթ:

XVII դարի՝ բառերի այբբենական դասավորությամբ ձեռագրերում գերակշռող հսկայ-ը հանդիպում է սկայ // սկա // ըսկայ ձևերով:

Գերակշռում է նաև հիւթ-ը:

Ձեռագրերից մեկում հանդիպում է հաղթանդամ-ի առանցի տարբերակը՝ աղթանդամ (Վիթխարի):

Յ-ի անկում: Բառավերջում յ-ի անկում արձանագրելիս համարյա միշտ հանդիպում է նաև յ-ով տարբերակ, այնպես որ կարելի է առանձնացնել բառավերջում յ/զրո հնչյունական տարբերակները, ինչպես արդեն նշված հսկայ - սկա, յարակայ - յարակա, փիլիսոփայ-փիլիսոփա, այնպես և այլ օրինակներում:

Միջձայնավորային դիրքում յ-ի անկումով հնչյունական տարբերակներն են գոանալ (Բնաւորել), հաել (Դիտել), Հոակապ, տւրնջենահին (Լոյս) //տունջենահին //տրւրնջենահին:

XVII դարի ձեռագիր բառարաններում՝ Հոակապ, հրամաել (Ասել), նաել (Հայցել), վկաութիւն⁶⁷ (Պիտառութիւն), միայնգաման (Համանգաման):

Յ-ի անկում է առկա բառասկզբում՝ անդուզն (Ամեղել) բառում:

Բառամիջյան դիրքում յ-ի հավելում է նկատվում թիվ 4612 և 8601 ձեռագրերում. որովայնայկոչ (Վիուկ), մենայնարտել (Նահատակել), խորայփիտ (Շոքք), հակայճառ (Խազմ), խորայմանկել (Պատրուակել), արձայգանգք (Ձայն), էայպատիւ // էայպատիւ (Հիւղական, Հիւինակ) և բազմայշառաւեղ (Անտառախիտ):

Առավել մեծ թիվ են կազմում յ-ի հավելումները XVII դարից վկայված ձեռագիր բառարաններում. թիվ 516-ում դրանք համատարած են մասնավորապես բարդ բառերի կազմության ժամանակ ա հոդակապից հետո՝ գծայգրութիւն (Նմանութիւն), կենդանայգիր, հրաշայփառ, լուսայկիզն (Լոյս), բազմայ-

⁶⁵ Նույն տեղում, էջ 28:

⁶⁶ Տարբերակներն արձանագրված են V դ. գրաբարում. ՆՀԲ, II, էջ 128, 718:

⁶⁷ Բառն արձանագրել է Գ. Ջահուկյանը XIV-XV դդ. հիշատակարաններում. Գ. Ջ ա - հ ու կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 28:

ճառագաթ, խաւարայրորբ (Խաւար), խորայխորհուրդ, քողայրորբեալ (Պատրուակեալ), համայգոյգ, համայհաւագ, միայհադոյն, հակայճառ, հակայդարձ (Խագմ), մենայմարտել (Նահատակել), սնայպարծ, սնայփառ (Այտուցեալ), Յախուռնայխօս, պաճուճայբան, տարայմերժել (Ձգել) *և այլն, այնպես էլ* հայնգոյն, ըմբոյն (Արդակ), խորայմանգեալ, միայնգաման *բառերում*:

Այդպիսի հավելումներ առկա են և թիվ 5008 (խորայմանկ, հայնգոյն), 3261 (բազմայբեր (Հոյակապ), ապայգովել (Լուտալ)), 2295 (Էայպատիւ), 9116 (բազմայշաւիդ, բազմայզան (Բազմայպատիկ)), մանկայտիս (Համբակ), իմաստայսեր (Բետոր), մանկայգիտիք (Պոռնիկ), 6624 (տարայկուսանք (Դիլիթ), քրիստոսայփառ (Աստուածագան)), 7995 գոյնեա (Գէթ), 2331 (խաւարամայծ (Խաւար)), 7014 (ուղփայճեմ (Լոյս)), 6624 (հողմայարոյցք (Ձայն), տերեւայխիտ (Անտառախիտ)), 8533 (դատայվճիռ (Անհաս)) ձեռագրերում:

Բառասկզբում յ/զրո տարբերակներից ապահով (Հեղինակ)-յապահով-ը XII-XVI և XVII դդ. հանդիպում է համարյա հավասարաչափ:

Դրափոխությամբ և առանց դրափոխության տարբերակներ: *Այս տարբերակների գոյությունը պայմանավորված է ր հնչյունով. Անպահր -Անպարի // Անպարհան, դարովել (Լուտալ) - դրսովել, Կարպետ // Կարպետ - Կապերտ:*

XVII դ. ձեռագիր բառարաններում իշխում է դարովել -ը:

Կարպետ - Կապերտ *տարբերակներից գերակշռում է վերջինը. մեկական են հանդիպում կարպիտ և կարպետ ձևերը:*

Ձևաբանական տարբերակներ: *Այս տարբերակներից, որոնք արձանագրել է Գ. Ջահուկյանը, բառարաններում հանդիպում են լոսել և պողել// պաղել - ը՝ գրական լեսել և պեղել բայերի ձայնդարձային տարբերակները⁶⁸. լեսել (Ծամել)- լոսել, պեղել(Ցանկել) - պողել //պաղել:*

Հետաքրքրական է, որ ձայնդարձային տարբերակները միննույն ձեռագրերում չեն հանդիպում:

Բառակազմական տարբերակներ: Ածանցային տարբերակները⁶⁹ *վերաբերում են միայն -ան- միջաձանցի առկայությանն ու բացակայությանը. այսպես՝ անկաճիլ (Թշուառանալ) - անկաճանալ, գեղձալ (Պիտալ) - գեղձանալ, զերծումն (Լուծումն - զերծանումն, ըղձալ (Պիտալ) - ըղձանալ, մտել⁷⁰ (Սպրդել) - մտանել:*

⁶⁸ Մանրամասն տե(ս Գ. Ջ ա հ ո լ կ յ ա ն. Հայոց լեզվի պատմություն..., էջ 254-255, 277:

⁶⁹ Այսպիսիք Գ. Ջահուկյանը ներկայացնում է «Ձևաբանական տարբերակներ» ենթախմբում՝ գտնելով, որ «...արդեն վաղնջահայերենում պիտի նկատվեին խոնարհման հիմքերի փոխանցումներ»՝ հ.-ե. ընգայինով հիմքերի հետագա քայքայումը հանգեցնելով վ.-հ. * - a - ne - mi և * - e - mi > հ.հ. - ան-եմ և -եմ ձևերի փոխանցումներին... տե(ս Նույն տեղում, էջ 255:

⁷⁰ Այս ձևն է առանձնացրել նաև Հ. Մուրադյանը միջին հայերենում՝ արձանագրելով, որ «ինչպես այս..., այնպես էլ Վայոց ձորում բառամիջի -ն-ի անկման դեպքերը միայն առանձին բարբառներում կատարված փոփոխություններ են, որոնք լայն տարածում չեն ստացել». տե՛ս Ակնարկներ ..., Ա, էջ 148:

Բնչպես կարելի է նկատել ձեռագրահամարներից, թիվ 2371 ձեռագրում, որը XIV դ. վկայություն է, գերակշռում են -ան- միջաձանցով տարբերակները:

Գ. Ջահուկյանի հավաստումով՝ «... դատելով -ն- աձանցով և անաձանց ձևերի հետագա բարբառային բաշխումից՝ կարելի է ասել, որ աձանցավոր ձևերն ավելի բնորոշ են եղել արևմտյան, անաձանց ձևերը՝ արևելյան տարածքներին, բայց ոչ հոծ կերպով»⁷¹:

Պատկերը հետևյալն է XVII դ. ձեռագիր բառարաններում. Անկաձիլ - անկաձանալ, զերծումն - զերձանումն, ըղձալ - ըղձանալ տարբերակները համարյա հավասարաչափ են կիրառվում:

Գեղձալ-գեղձանալ, մտել -մտանել, մուծել-մուծանել տարբերակների դեպքում կրկնակի շատ են միջաձանցավորները:

Հիմքակազմներից հանդիպում է միայն բայարմատ - կատարյալի հիմք (գրո/ աց) տարբերակը, այն էլ միայն մեկ օրինակով՝ հիմնեալ (Կառուցեալ) - հիմնացեալ. թիվ 8106 ձեռագրում արձանագրված է հիմնացուցեալ-ը՝ պատճառական հիմքով:

Ահա այսպիսին է բառային տարբերակների պատկերը XII-XVII դդ. հոմանիշների ձեռագիր բառարաններում:

ВАРИАНТЫ СЛОВ В РУКОПИСНЫХ СЛОВАРЯХ СИНОНИМОВ

ՆԱԶԻԿ ՕԳԱՆԵՏՅԱՆ

Р е з ю м е

В рукописных словарях синонимов XII–XVII вв. встречаются слова, идентичные по смыслу, но имеющие некоторые звуковые различия. В лингвистических трудах они рассматриваются как варианты слов. Исследуемые варианты слов выделены сравнением всех рукописных словарей синонимов, хранящихся в Матенадаране. С целью целостного представления фактов, во избежание повторений и искусственного расширения изложенного, варианты слов представляются по фазам периодизации армянского языка: XII–XVI и XVII вв. Из исследования становится ясно, что наибольшее число составляют орфографические варианты слов, словообразовательные же ограничиваются несколькими производными вариантами.

⁷¹ Գ. Ջ ա հ ո յ ա ն. Հայոց լեզվի պատմություն ..., էջ 377-378: